ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սոգիշոփի 1

№ 920-Ա « 23 » հուլիսի 2024թ.

«ԵՐԵՎԱՆԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՈՒՄ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանով հաստատված հավելվածի 177-րդ կետով.

1.Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնին՝ հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի 2023 թվականի դեկտեմբերի 18-ի N 4167-Ա որոշման N 2 հավելվածի 8-րդ կետը՝ 2024 թվականի օգոստոսի 1-ից մինչև սեպտեմբերի 11-ը ներառյալ «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկում իրականացնել 2021-2023թթ. կատարողականի աուդիտ:

2.«Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկում աուդիտ իրականացնելու նպատակով ընդգրկել աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետներ Ա.Ավետիսյանին (խմբի ղեկավար), Ա.Շահբազյանին, գլխավոր մասնագետի ժ/պ Լ.Դանիելյանին և առաջատար մասնագետի ժ/պ Ս.Սարգսյանին:

3.Սույն կարգադրության կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ